

ԳԼՈՒԽ ԻԴ.

1 Յաղագս մահու սրբոյն մեծի քահանայապետին Ներսէսի ի թագաւորէն Պապայ, թէ ո՛րպէս կամ զիա՛րդ սպանաւ ի նմանէ:

2 Այլ թագաւորն Պապ յամենայն ժամ էր թշնամի մեծի քահանայապետին վասն յանդիմանութեան մեղաց իւրոց չարեաց՝ զոր գործերն, եւ յանդիմանեալ լինէր յառնէն Աստուծոյ ի Ներսիսէ հանապագ: 3 Ոչ զգաստանալ կամէր եւ ոչ զալ յուղղութիւն, եւ ոչ համբերել կարէր հանապագորդ նախատանացն յանդիմանչին. եարկ ի միտս սպանանել զմեծ քահանայապետն Աստուծոյ զՆերսէս: 4 Իբրեւ յայտնի զայս ոչ մարթ էր նմա առնել, կեղծաւորել կերպարանէր իբրեւ այն եթէ յուղղութիւն ինչ եկեալ է. աղաչէր զքահանայապետն Աստուծոյ տալ նմա ապաշխարութիւն: 5 Եւ կոչեցաւ յապարանս իւր ի Խախ աւանի յԵկեղեցաց գաւառի. արար նմա ընթրիս, աղաչեաց զայրն Աստուծոյ բազմել նմա յարթունական գահոյսն, եւ իբրեւ այնու թէ սրբեսցի նա ի չարեաց անտի իւրոց, եւ ինքն այնուհետեւ յայնմ հետէ յապաշխարութիւն մտցէ:

6 Իսկ իբրեւ զառաջինն բազմեցոյց, ինքնին թագաւորն յոտն կացեալ հովանեալ, ի մեջգետին անցեալ, անապակ մատուցանէր առնն Աստուծոյ Ներսիսի յընթրիս անդ, եւ դեղ մահու ընդ կոտինդն խառնեալ մատուցանէր նմա: 7 Եւ յորժամ ըմբեր զբաժակն զայն, իմացեալ անդէն՝ խաւսել սկսաւ եւ ասէ. Աւրինեալ է Տէր Աստուած մեր, որ արժանի արար զիս ըմպել զբաժակս զայս, եւ հասանել մահուս՝ որ վասն Տեառն է, որում եւ ցանկացեալ էի ի մանկութենէ իմմէ: 8 Արդ զբաժակս փրկութեան ընկալայց, եւ զանուն Տեառն կարողացից, զի եւ ես հաւասարեցից հասանել ի մասն ժառանգութեան սրբոցն ի յոյս: 9 Այլ քեզ, ո՛վ թագաւոր, արժան էր իբրեւ զայր թագաւոր յայտնի հրաման տալ եւ սպանանել. զի ո՛վ էր՝ որ արգելոյր զքեզ, կամ ո՛վ էր՝ որ պահէր զձեռն քո ի գործոց, զոր ինչ կամէիր գործել: 10 Բայց, Տէր, թող սոցա զայս գործս՝ զոր ինչ գործեցին յիս. եւ ընկալ զհոգի ծառայիս քո, որ հանկուցիչդ ես ամենայն աշխատելոց, եւ կատարիչ ամենայն բարութեանց:

11 Չայս եւ այսպիսի եւ որ ինչ նման են այսպիսի բանք՝ խաւսեցաւ. եւ յարուցեալ գնաց ի վարս իւր: 12 Եւ զհետ գնացին Նորա ի տաճարէն արթունի ամենայն մեծամեծքն նախարարքն Յայոց, եւ Մուշէղ սպարապետն Յայոց եւ Յայր մարդպետ. եւ ամենայն որ միանգամ էին անդ, մտին ընդ նմա ի վանս Նորա: 13 Եւ իբրեւ եմուտ ի վանս իւր, վերացուցեալ զպարեգաւտս իւր՝ ի վերայ սրտին ցուցանէր կապուտակեալ քան զչափ նկանակի միոյ: 14 Իսկ մեծամեծք նախարարացն մատուցանէին նմա թիրակէս եւ անդեղեայս վասն ապրելոյ. իսկ նա ոչ կամեցեալ զայն՝ ի բաց մերժէր, այլ ասէ. Մեծապէս եղեւ ինձ բարի, զի եհաս ինձ մեռանել վասն զգուշութեան պատուիրանացն